ԻՆՉ Է ՊԵՏՔ ԻՄԱՆԱԼ COVID-19-Ի ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՍԻՆ

Այժմ հասանելի է դեղորայք՝ COVID-19-ի կանխարգելման և բուժման համար: Պատվաստանյութերի, խթանիչ չափաբաժինների, թեստավորման և դիմակ կրելու հետ մեկտեղ՝ այս դեղորայքը մեկ այլ միջոց է՝ ինքներս մեզ և մեր համայնքները COVID-19-ից պաշտպանելու համար:

ՄԻԱՅՆ ԴԵՂԱՏՈՄՈՎ

Խոսեք ձեր բուժաշխատողի հետ, եթե հավելյալ տեղեկատվության կարիք կա, կամ մտածում եք՝ այս դեղամիջոցները ճիշտ են ձեզ համար: Տեղեկացրեք առողջության հետ կապված ցանկացած մտահոգությունների և ներկայումս ձեր կողմից ընդունվող դեղորայքի մասին: Բուժաշխատողը կասի՝ արդյոք դուք իրավասու եք ստանալ այն, և կբացատրի տարբերակները:

Եթե դուք չունեք բուժաշխատող, զանգահարեք Հանրային Առողջության Զանգերի Կենտրոն՝ **1-833-540-0473** հեռախոսահամարով:

ՈՐՔԱ՞Ն ԱՐԺԵ

Դեղորայքն անվճար է, բայց հնարավոր են գանձումներ բժշկական ծառայություններ տրամադրողի կողմից:

- Եթե դուք ունեք **մասնավոր ապահովագրություն**, ապա ստուգեք ձեր պլանը՝ տեսնելու , թե արդյոք այն փակում է բոլոր ծախսերը:
- Եթե դուք **ՉՈՒՆԵՔ մասնավոր ապահովագրություն**, ապա հարցրեք դեղատանը, հիվանդանոցում կամ բժշկի գրասենյակում՝ արդյոք կան այլ վճարներ:
- Զանգահարեք Հանրային Առողջության կենտրոն **1-833-540-0473** հեռախոսահամարով՝ անվճար խնամք ստանալու համար: .

Medicare-ը և Medicaid-ը փակում են բոլոր ծախսերը:

Այս դեղորայքը **ՉԻ փոխարինում COVID-19 պատվաստանյութին և ՉԻ փոխում Մեկուսացման և Կարանտինի ցուցումները**: Եթե դուք իրավասու եք ստանալու COVID-19 պատվաստում, դուք պետք է պատվաստվեք հնարավորինս շուտ:

ԴԵՂՈՐԱՅՔ՝ COVID-19-Ը ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Եթե դուք չեք կարող ստանալ COVID-19-ի պատվաստանյութ բժշկական պատճառներով, բուժաշխատողը կարող է ձեզ դեղորայք նշանակել՝ ձեզ ծանր COVID-19-ից ավելի լավ պաշտպանելու համար:

Կանխարգելող դեղորայքը հասանելի է 12+ տարիքի անձանց համար, ովքեր չեն կարող ստանալ COVID-19-ի պատվաստանյութ բժշկական պատճառներով, կամ նրանց, ովքեր լավ չեն արձագանքում պատվաստանյութին, քանի որ ունեն թույլ իմունային համակարգ՝ առողջական խնդրի կամ բուժման պատճառով:

ԻՆՉ ԱՆԵԼ

Խոսեք ձեր բուժաշխատողի հետ, եթե կարծում եք՝ այս դեղորայքը լավ է ձեզ համար: Տեղեկացրեք առողջության հետ կապված ցանկացած մտահոգությունների և ներկայումս ձեր կողմից ընդունվող դեղորայքի մասին:

ԴԵՂՈՐԱՅՔ՝ COVID-19-Ը ԲՈՒԺԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Եթե ձեր COVID-19 թեստը դրական է և ծանր հիվանդանալու վտանգն ավելի մեծ է, հասանելի է բուժող դեղորայք: Ավելի մեծ վտանգ ներկայացնող բժշկական խնդիրներից են՝

- Ունեք/ունեցել եք քաղցկեղ
- Ունեք շաքարային դիաբետ
- Ունեք/ունեցել եք սրտային հիվանդություն
- Ունեք երիկամների, լյարդի կամ թոքերի քրոնիկ հիվանդություն
- Հղի եք
- Ունեք ավելորդ քաշ կամ գեր եք

Խմելու և ներարկման միջոցով նախատեսված բուժումները հասանելի են 12+ տարիքի անձանց համար և կարող են կանխել ձեր հիվանդանոց գնալը, եթե ընդունեք դրանք ախտանիշները հայտնվելուց հետո հնարավորինս շուտ.

- Հազ
- Տենդ կամ դող
- Դժվարաշնչություն
- Հոգնածություն
- Գլխացավ



ԻՆՉ ԱՆԵԼ

Անմիջապես զանգահարեք ձեր բուժաշխատողին և հարցրեք բուժող դեղորայքի մասին, եթե ձեր COVID-19 թեստը դրական է և դուք ախտանիշներ ունեք:

Կամ օգտվեք Թեստավորվել Բուժվելու Համար ծրագրից՝ տեղում թեստավորվելու համար: Եթե ձեր թեստի արդյունքը դրական է, դուք կարող եք նույն այցի ժամանակ ստանալ դեղորայք:

Բացի այդ, կարող եք կապ հաստատել Հանրային Առողջության Հեռաառողջապահական ծառայությունների հետ **1-833-540-0473** հեռախոսահամարով՝ գնահատման և բուժման համար: Եթե արդեն ունեք դրական արդյունքով թեստ, դեղորայքը կարող է ուղարկվել անմիջապես ձեզ կամ տեղական Թեստավավորվել Բուժվելու Համար կետ, որտեղից կարող եք վերցնել այն: